

ՀԱՅՐ ՅԱԿՈՒՎ ԱՐԴԱՊԵՏ ՏԻՐՈՅԵԱՆ

1933 թուականի յուլիսի 29-ին Բուդապեշտում իր մահկանացուն կնքեց Վենետիկի Մխիթարեան միաբանութեան նուիրեալ եւ լուսամիտ անդամներից մէկը, երջանկայիշատակ Յակոբ վարդապետ Տիրոյեանը: Այս անունը գրեթէ անծանօթ է Հայաստանի մտաւորականութեանը, նոյնիսկ հայ բնագիտութեան պատմութեամբ զբաղուողներին: Պատճառը դիւրին մեկնելի է: Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանի անունը, գիտամանկավարժական ծանրակշիռ եւ բեղմնաւոր գործունէութիւնը մինչեւ անցեալ դարի վերջերը չի ներկայացուել Հայաստանի որեւէ տպագիր մարմնում: Աւելին, 1966 թուականին Վենետիկի Սուրբ Ղազարի տըպարանում Հ. Մեսրոպ Վրդ. Ճանաչեանի աշխատասիրութեամբ լոյս տեսած «Սուրբ Ղազար, Մայրավանք Մխիթարեան» չափազանց արժէքաւոր մենագրութեան էջերում ներկայացուած շուրջ 50 Մխիթարեան գործիչների կենսագրականներում բացակայում է յիշեալ գործչի անունը: Նրա համառօտ կենսագրութիւնը եւ հրատարակած աշխատութիւնների ցանկը առաջին անգամ տողերիս հեղինակի ջանքերով Հայաստանում ներկայացուեց 1986 թուականին¹:

Արմատներով պատմական Հայաստանի կարին քաղաքից Տիրոյեան գերդաստանը Մխիթարեան միաբանութեանն է պարգեւել երեք հոգեւոր գործիչներ՝ եզակի երեւոյթ հայ եկեղեցու պատմութեան էջերում: Աստծուն նուիրուած եղբայրներից երէցը Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ, լեզուաբան Աթանաս Վարդապետ Տիրոյեանն է (1857-1926)²: Միւս եղբայրը Վի-

¹ Հայկական Սովետական Հանրագիտարան, հտ. 12, Երեւան, 1986, էջ 19:
² Սուրբ Ղազար: Մայրավանք Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1966, էջ 144-146:

եննայի Մխիթարեան միաբանութեան անդամ էր: Երէց քոյրը՝ միանձնուհի Անարատ Յղութեան կարգէն՝ Քոյր Սանդուխտն էր:

Յակոբ (մկրտութեան անունով Մկրտիչ) Տիրոյեանը ծնուել է 1863 թուականի ապրիլի 23-ին Կարին քաղաքում: Նախնական կրթութիւնը ծննդավայրում ստանալուց յետոյ 12-ամեայ մանչուկը մտել է Վենետիկի Սուրբ Ղազար վանքի դպրոցը: Ուսումնառութեան տարիներին ջանասիրաբար ուսումնասիրել է հայ գիրն ու գրչութիւնը, պատմութիւնը, բնական գիտութիւնները: Այդ տարիներին իրենց ստեղծագործական բուռն գործունէութեամբ Սուրբ Ղազարի Ակադեմիային իւրայատուկ մի շուք էին հաղորդում Մեծն Ալիշանը, հայ բնագիտական դասագրքերի ու բազում մենագրութիւնների հեղինակ Հ. Մանուէլ Վրդ. Քաջունին, կրթական գործիչ, բանասէր Հ. Գաբրիէլ Վրդ. Նահապետեանը, աստղագէտ Հ. Խորէն Վրդ. Սինանեանը, բնագէտներ Հ. Պօղոս Վրդ. Գաֆթանը, Հ. Սիմոն Վրդ. Երեմեանը, ուրիշներ...

1879-ին Մկրտիչ Տիրոյեանը սքեմաւորուելով ընդունել է Յակոբ հոգեւոր անունը, 1881-ին ուխտով անդամակցել Մխիթարեան միաբանութեանը: 1884-ին, 21-ը հազիւ բոլորած ձերնադրուել է քահանայ: 1884-ից մինչեւ իր լուսաւոր եւ իմաստալից կեանքի վերջը Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանը, միշտ հաւատարիմ Մխիթարեան Ուխտին իր...տուած երդմանը ծաւալել է վիթխարածաւալ գիտամանկավարժական գործունէութիւն, հրատարակել մէկ տասնեակից աւելի մենագրութիւններ եւ դասագրքեր, որոնց մեծ մասը նուիրուած է բնագիտութեանը:

Հակիրճ ներկայացնենք Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանի մանկավարժական եւ եկեղեցական գործունէութիւնը: Մինչեւ 1888 թուականը Ս. Ղազար վանքի դպրոցում դասուանողել է թուաբանութիւն եւ պատմութիւն: 1888-ին Սուրադ-Ռափայէլեան վարժարանում եղել է ուսուցիչ եւ հսկողապետ: 1889-1892-ին Թրանսիլլանիայի Եղիաբէթուպոլիս (այժմ՝ Ռումինիայի Դումբըրվէն քաղաք) վարել է մանկավարժական բեղուն գործունէութիւն³:

³ Եղիաբէթուպոլիսը յայտնի է նաեւ Հայաքաղաք անուամբ: Այս քաղաքում են ծնուել հայազգի բազմաթիւ նշանաւոր գործիչներ՝ գեներալ էրնէ Կիւր (1800-1849) եւ Վիմոշ Ղազարը (1815-1849), գրող եւ քաղաքագէտ Մորից Լուքաչը (1812-1881), բժշկապետ Գիրգոր Բազրուպանեանը (1830-1891), իր

1892-1903 թուականներին Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանը Տրապիզոնի Մխիթարեանների վարժարանում նախ եղել է տեսչի օգնական, ապա՝ 1894-ից, շուրջ եօթ տարիներ՝ տեսուչ: 1903-1913 թուականներին Կ. Պոլսում տեսչի պաշտօնով աշխատել է նախ Բերայում եւ ապա Քաղկեդոնում: 1913-ին վերադարձել է Ս. Ղազար եւ, հազիւ մէկ տարի աշխատելուց յետոյ վանքի դպրոցում, տեղափոխուել է Մուրադ-Ռափայէլեան վարժարան: 1916-ին ընտրուել է Մխիթարեան միաբանութեան վարչութեան անդամ, 1916-1917-ին՝ վանահայր: 1920-1922-ին վարել է Կ. Պոլսի Բենեդիկտիկոս ԺԵ. հայ որբանոցի տեսչութիւնը: 1922-1929-ին Խտալիայում ստանձնել է վանական տարբեր պաշտօններ: 1922-ից Բուդապեշտի հայ համայնքի հոգեւոր հովիւ էր, ուր եւ 1933-ին ծանր հիւանդութիւնից յետոյ, 70 տարեկանում վախճանուել է:

Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանը 1897 թուականից զբաղուել է գրական, լեզուաբանական, պատմական, բնագիտական բնոյթի աշխատութիւնների հրատարակման տքնաջան աշխատանքով: Շուրջ երեք ու կէս տասնամեակի ընթացքում նա հրատարակ է հանել մէկ տասնեակից աւելի տարբերոյթ դասագրքեր: Այս համառօտ կենսագրականից յետոյ ուզում ենք անդրադառնալ նրա գիտական, աւելի ստոյգ՝ բնագիտական վաստակի վերհանմանը, գնահատմանն ու կարեւորմանը:

Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանի ոչ բնագիտական բնոյթի աշխատութիւններն են՝ «Համառօտ դասագիրք ընդհանուր պատմութեան»: Հտ. 1 (Պատմութիւն արեւելեան ազգաց Յունաց եւ հռովմայեցուց, Վենետիկ, 1897, 214 էջ): Հտ. 2 (Պատմութիւն միջին եւ նոր դարուց, Վենետիկ, 1897, 420 էջ), «Հայերէն քերականութիւն աշխարհաբար լեզուի», Վենետիկ, 1929: Տարի 1, 143 էջ եւ տարի 2, 232 էջ: Թարգմաբար՝ տուած է Թատերական Գրադարանին Թ. 13 «Որդիական սէր» (Թատերախաղ մէկ արարուածով) եւ «Երկու աղանեսակք» (Թատերախաղ երեք արարուածով): Երկուսը մէկ գրքում, Վենետիկ, 1916, 79 էջ:

Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանի բնագիտական ուսումնասիրութիւնները հայ բնագիտութեան պատմութեան էջերում անվիճելիօրէն ունեն իրենց ծանրակշիռ եւ պատշաճ տեղը: Դրանցից ա-

որդին՝ հասարակական գործիչ, լեզուաբան եւ բանասէր Ղուկաս Բաղրուպանեանը (1861-1926):

ուսել ամբողջականն ու գիտական բարձր մակարդակ ապահովող Վենետիկում 1915-ին «Ուսումն բնական եւ բնաբանական գիտութեանց» վերտառութեամբ դասագիրքն է, որով աւարտում է Վենետիկի Միլիթարեանների շուրջ երկդարեայ՝ իր նախագէտը շունեցող բնագիտական ժառանգութեան չափազանց առատ եւ ազգօգուտ հունձքը:

Չափազանց գրաւիչ ճաշակով կատարուած 521 նկար-պատկերներով 480 էջանոց յիշեալ աշխատութիւնում քննարկուած են Ֆիզիկայի, քիմիայի, երկրաբանութեան եւ կենսաբանութեան հարցերը: Տիտղոսաթերթում տրուած է դասագրքի յանձնարարականը. «Իրենց գործնական օգուտներով, մշակութեան, ճարտարագործութեան, առողջապահութեան եւ առտնին տնտեսութեան մէջ»:
Դասագիրքը երեք բաժիններից է՝ բնաբանական գիտութիւնք, բնական գիտութիւնք եւ երկրագործութիւն:

Հայր Յակոբ Վրդ. Տիրոյեանը «Բնաբանական» գիտութեան տակ ներառել է Ֆիզիկայի եւ քիմիայի մի շարք հարցեր: Այս բաժինը 186 էջ է: Չկան սակայն լատինական նշումներ թէ քիմիայից եւ թէ Ֆիզիկայից:

«Բնական գիտութիւնք» բաժնում ներկայացուած են «Երկիր», «Մարդն», «Կենդանիք» եւ «Բոյք» ենթաբաժինները (186-360):

Եւ վերջապէս վերջին՝ «Երկրագործութիւն» բաժնում խօսւում է հողերի, դրանց պարարտացման եւ մշակման խնդիրների մասին: Ներկայացուած են բուսաբանութեան որոշ բնագաւառներ՝ բժշկական բոյսեր, անտառ, այգի, գինի, ագարակի կենդանիներ, կաթ, կարագ, հաւ, բաղ, սագ, մեղու, շերամ, մշակութեան վնասակար միջատներ: Գիրքն աւարտում է «Ընթերցմունք» խորագիրը կրող բաժնով, ուր քննարկուած են «Հողի վերլուծումը», «Հացագործութիւն», «Շինութիւն շաքարի ճակնդեղէ», «Ագարակի կենդանեաց դարմանումը» գլուխները: Ինչպէս տեսնում ենք, Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանի յիշեալ ուսումնասիրութիւնը նաեւ բնագիտական մի իւրօրինակ հանրագիտարան

է եւ եթէ այն չի ընդգրկուել մեր ուսումնասիրութիւններէից մէկում, ապա սոսկ ժամանակագրական առումով⁴:

Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանի յիշեալ դասագրքում նիւթերը տրուած են գիտական բարձր մակարդակով, պարզ, դիւրըմուռելի ոճով, փորձերի, դրանց նկարների զուգորդմամբ: Այսպէս, գրքի 111-րդ էջում տրուած է «Մետաղներ» թեման: Ընդհանուր նկարագրութեանը (8-10 տող) հետեւում են տեղեկութիւններ մի շարք առաւել լայն տարածում ունեցող մետաղների մասին: Դրանք են. երկաթ, պողպատ, պղինձ, ցինկ, կապար, պողեղածին (ալումին), նիկել, բիսմութ, մագնեզիում, մանգան, ծարիր, իրիդիում, կոբալտ, քրոմ, ոսկի, արծաթ, լանտանի (պլատին), վոլֆրամ: Մօտ մէկ էջ խօսւում է մետաղներից ստացուող տարբեր համաձուլուածքների մասին: Վերջում շուրջ մէկ տասնեակ հարցերով ամփոփւում է թեման:

Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանի գրքում զգալի տեղ են գրւում տեխնոլոգիական շատ կարեւոր տեղեկութիւնները: 20-րդ դարի սկզբներին լոյս տեսած նմանատիպ ուսումնասիրութիւններում սա իւրօրինակ մի մօտեցում է սովորողին տեխնիկական գիտելիքներով եւս զինելու ազգանուէր գործում: Այսպէս, գրքի 504-506-րդ էջերում սեղմ, սակայն գիտական բարձր մակարդակով տրուած է շաքարի սպիտակ ճակնդեղից շաքար ստանալու տեխնոլոգիան: Մտորեւ տրւում է դրանից մէկ հատուած. «Ասոր շինութիւնը կարգ մը մէջէ մէջ գործողութիւններէ կը բաղկանայ: Նախ ֆակնդեղներն կը լուան, յետոյ մեքենայով բարակ շերտերու կը վերածուին ու կը դրուին մեծ ընդունարանի մը մէջ՝ ուր կան սփռիչներ (diffuseur) որուն մէջ հաղորդուած է 60-70 աստիճան տաք ջուր: Այդ ջուրը կ'անցնի մէկ սփռիչէ ի միւսն եւ ալ աւելի կը ջերմանայ միջանկեալ սիւնակներուն մէջ ուսկից շոգիի խողովակներն կ'անցնին. այդ տաք ջուրը իր մէջ կը լուծէ շերտերուն բոլոր շաքարը: Այս կերպով ստացուած շաքարային հիւթը իր աղտերէն կը մաքրուի խառնուելով կրաջրոյն որ աղտերուն հետ կը կազմէ անլուծելի բաղադրութիւններ: Հեղուկը կը պայծառանայ հանգչելով, յետոյ կը գտնւի

⁴ ՓԱՇԱՅԵԱՆ Ա., 19-րդ դարում Միսիսարեան միաբանութեան հրատարակած հանրագիտարանները, «Պայթար» ամսագիր, Երեւան, 1998, No. 1, էջ 31-33:

գայն դիմացկուն կտաներէ անցունելով մասնաւոր գործիքի մը մէջ, որ կ'ըսուի գոտիչ-մամուլ (filtre press):

Ձտուած հեղուկը կը պարունակէ կիրի շաքարատ (sucrate de chaux): Կը դնեն գայն կարասի մը մէջ շոգիով տաքցած 100 աստիճանի չափ՝ բնածխական կազի հոսանքին ազդեցութեան տակ՝ որ կը բաղալուծէ շաքարատը: Հեղուկը կը պղտորի, գայն կը պածառացնեն ապա քամոցէ անցունելով»:

1919 թուականին Վենետիկում լոյս է տեսել Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանի «Ուսումնական Հաւաքածոյք» 448 էջանոց ինքնատիպ մի ուսումնասիրութիւն, որն իր նախատիպը չի ունեցել Հայ իրականութեան մէջ: Սա գիտական տարբեր պարբերականներից, մենագրութիւններից արուած բնագիտական իւրօրինակ մի ծաղկաքաղ է: Ահա այս գրքի նախաբանից մի հատուած. «Ներկայ Ուսումնական Հաւաքածոյք անուամբ գրքոյկս դպրոցական կարելոր գործի մը նկատուած է, իր մէջ ամփոփած հրահանգիչ եւ բազմազան յօդուածներուն պատճառաւ, զորս ընտրանօք ծաղկաքաղ ըրած ենք նշանաւոր բնագետներուն հեղինակութիւններէն, հետեւողութեամբ Ժ. Բոդրիլլարի, որոնք յատուկ ունով մը դասաւորուած են եւ համաձայն՝ լիկիոնական ընթացք կատարող աշակերտներու համար սահմանեալ ծրագրին: Արդարեւ սորա մէջ պարունակուած գիտական ընթերցանութիւններն՝ մեծապէս պիտի նպաստեն ուսանողին քայլ առ քայլ ընելիք զարգացման, բնական գիտութեանց իւրաքանչիւր նիւղերուն մէջ»:

«Ուսումնական Հաւաքածոյքում» զետեղուած են Ֆիզիկային, քիմիային, կենդանաբանութեանը, բժշկութեանը, բուսաբանութեանը, երկրաբանութեանը նուիրուած շուրջ 50 յօդուածներ: Յօդուածների մի մասի հեղինակները եւրոպացի ճանաչուած բնագետներ են՝ Օզանամ, Բուռտոյ, Սպենսեր, Հիւքսլէյ, Լապլաս, ուրիշներ: Կան յօդուածներ, որոնք վերցուած են «Բազմալէպից», 1885-1887-ին Կ. Պոլսում, ճանաչուած բանասէր եւ բնագետ Նազարէթ Տաղաւարեանի խմբագրութեամբ լոյս տեսած «Գիտական շարժում» գիտական ամսագրից: Յատկանշական է պատմական շրջանի իրողութիւնը, որ յիշեալ ծաղկաքաղում կան Հրանտ Ասատուրի եւ իր կնոջ՝ Սիպիլի տրամադրած մի շարք յօդուածները: Ստորեւ ներկայացնում ենք մի հատուած Հ. Յակոբ Վրդ. Տիրոյ-

եսնի «Ուսումնական հաւաքածոյքի» 254-րդ էջից. «Չղջիկին ել-
 քը միշտ յեղակարծ է գրեթէ բունն, ինչպէս այն ֆիգը, գոր
 ստիպուած է ընել թռիչ առնելու համար: Բայց անգամ մը որ
 օդին մէջ նետուի, իր սլացքը բաւական արագ է, սակայն ան-
 կանոն, մանուածապատ. սադիւն անդին կ'ընթանայ: Հագուա-
 դէպ է որ լայն շրջագծի մը վրայ արշաւէ. շատ անգամ իր
 որսորդութիւնը իր բնակարաններուն շուրջը կը կեդրոնանայ.
 որսի նուագութեան պատճառաւ միայն իր ասպարէզը կ'ընդ-
 լայնէ:

Չղջիկը ստեպ, դօդօշին պէս, իր արտաքին երեւոյթէն
 մեր կրած տպաւորութեան գոհ եղած է: Կը սպանեն զայն իր
 այլակերպ ձեւերուն ներշնչած ասրասփին պատճառաւ, կամ ֆար-
 պիկուսիւն ցոյց տալու համար: Սակայն քիչ էակներ կան որ
 անոր չափ իրաւունք ունենան մեր երախտագիտութեան, քանի
 որ ան կը փնացնէ փոքրիկ օձերը, որոնց պատճառաւ ֆախա-
 խուտ երկիրներու մէջ քուն չենք քնանար:

1919-1930-ական թուականներին Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեա-
 նը լոյս է ընծայել գիւղատնտեսական երեք ուսումնասիրութիւն-
 ներ՝ «Արջառաքուծութիւն» (Վենետիկ, 1919, 197 էջ), «Հաւաքու-
 ծութիւն» (Վենետիկ, 1921, 172 էջ) եւ «Ճագարաբուծութիւն
 գործնական» (Վենետիկ, 1930, 269 էջ): Մինչ այս աշխատու-
 թիւնները լոյս տեսնելը հայ իրականութեան մէջ նմանատիպ աշ-
 խատութիւններ լոյս չեն տեսել: Տպագրական բարձր ճաշակով
 ձեւաւորուած, նկար-պատկերներ պարունակող յիշեալ աշխատու-
 թիւններում քննարկուած են խոշոր եղջերաւոր անասունների,
 ընտանի թռչունների, մասնաւորապէս հաւերի, ինչպէս նաեւ ճա-
 գարների՝ աշխարհի տարբեր երկրներում դրանց տարածուածու-
 թեան, կերակրման, բուծման, բուժման եւ դրանց առընչակից
 տարաբնոյթ հարցեր: Բացի զուտ տեսական եւ գործնական հար-
 ցերից, յիշեալ գործերում կան չափազանց կարեւոր գործնական
 խորհուրդներ այն անձանց, որոնք իրենց տնտեսութիւններում
 զբաղւում են տնային պայմաններում գիւղատնտեսական կենդա-
 նիւնների բազմացման, մաստուկ ցեղերի ստացման խնդիրներով:

Յաւօք պէտք է արձանագրել, որ Հայաստանում 1920- ական
 թուականներից ցայսօր անասնաբուծութեան բնագաւառում տպա-

գրուած եւ ոչ մի ուսումնասիրութիւնում կամ դասագրքում չի յիշատակուած Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանի անունը⁵:

Կեանքի վերջին տարիներին բազմազբաղ մանկավարժն ու բնագէտը մեծ նուիրուածութեամբ եւ յաջողութեամբ յորինել է Մխիթարեան վանքի 1928-1934 տարիների օրացոյցը:

Յակոբ վարդապետ Տիրոյեանը հայ պատմաբանասիրական եւ յատկապէս բնագիտական գրականութիւնը, ինչպէս տեսանք, իր բովանդակալից եւ ստեղծագործ կեանքում հարստացրել է արժէքաւոր աշխատութիւններով: Այդ ամէնն արել է տքնանքով, գործին անսահմանօրէն նուիրուածութեամբ: Նրա անունը հպարտութեամբ պէտք է դրուի Մխիթարեան միաբանութեան անուանի եւ ծանրակշիւ բնագիտական ժառանգութիւն թողած վարդապետներ Մինաս Բժշկեանի, Յակոբ Ստեփանեանի, Մեսրոպ Աղաչարդեանի, Մատթէոս Սաղաթելեանի, Բարսեղ Նուրիճանեանի, Եղիշէ Գաֆտանճեանի, Մանուէլ Քաջունու, Պօղոս Գաֆթանի, Գաբրիէլ Մենեվիշեանի, Սիմոն Երեմեանի եւ էլի շատ ու շատերի անունների կողքին: «Ուսումնական հաւաքածոյք» գրքի առաջաբանի ստորեւ բերուող տողերը Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանը կարծես թէ հէնց իր համար է գրել. «Ինչպէս արուեստագէտ մը երբ իր ձեռքն ունենայ ընտիր եւ տարբեր աստիճանի գործիքներ՝ կրնայ սուղ ժամանակի մէջ, աւելի շատ եւ աւելի կատարեալ գործեր արտադրել. նոյնպէս ալ մտքի զարգացումն աւելի յառաջադէմ կ'ըլլայ, եւ գիտութեանց մէջ աւելի բեղմնաւոր յղացումներ կ'ունենայ, որ ատեն հոգացուած ըլլայ իրեն՝ նպատակին հասցնող այլեւ այլ օժանդակիչ միջոցներ»:

Եւ եթէ այս բոլորին ի յաւելումն նշենք նաեւ նրա մանկավարժական բազմաբեղուն գործունէութիւնը, ապա պատկերը առաւել ընդգրկուն կը դառնայ:

Երջանկայիշատակ մանկավարժի, վարդապետ-գիտնականի եւ բնագէտի մահախօսականն աւարտուում է հետեւեալ տողերով. «Իր մահը իր միաբանակիցներէն զատ խոցեց այն ամէնքը որ իրեն աշակերտած են մեր վարժարաններում մէջ եւ վայելած իր դաստիարակի անխոնջ ջանքերն ու հոգածութիւնը: Այդ պաշ-

⁵ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Ա., Թնչնարուծութիւն, Ե., 1969, Тамамщев А., Крупный рогатый скот Армении в прошлом и настоящем, Е., 1947.

տօնին բերումն ի մանկութենէ ցոյց տուած էր: Իր սիրական զբաղանքն էր դասախօսութիւն, ապրիլ տղոց մէջ եւ տղոց համար. նուիրուիլ վարժարանի ներքին եւ արտաքին փայլին՝ ի գործ դնելով իր բարոյական ու շինարարական բոլոր ձիրքերը:

Իր հոգեկիցները, հեռաւոր ու մօտաւոր սաները կը մաղթեն իրեն սրտագին՝ լսել փրկչական քաղցր կոչը. «Եկայ՛ առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից գճեզ»⁶:

Իր գոյութեան շուրջ 300-ամեայ պատմութեան ընթացքում Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնն ունեցել է մօտ 350 անդամ, որոնցից, մեր մօտաւոր հաշուումներով, միայն 60-70-ն են առաւել նշանակալից հետք թողել մեր գիտութեան, կրթութեան ու մշակոյթի ասպարէզներում: Հ. Յակոբ Վրդ. Տիրոյեանը դրանցից մէկն էր. անկասկած...

11.

ԱՍԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԵԱՆ

⁶ «Բազմավէպ», 1933, հտ. ՂԱ, էջ 560:

Father Hakob Tiroian
(summary)

Asatur Pashaian

The article presents a brief biography and examines the scientific heritage of Father Hakob Tiroian (1863-1933), a member of the Mekhitarist Congregation in Venice.

For the first time, an attempt has been made to present all of Tiroian's works known to us in the field of Biology. Special attention is given to the following monographs that were published in the review Armenian Biology: Cow Farming, Cattle Farming, Poultry Farming and Hare Farming.